Հավելված N 4
ՀՀ կառավարության 2021 թվականի
հոկտեմբերի 14-ի N 1681 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ «ՈՉՆՉԱՑՈՒՄ» ՄԱՔՍԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ՁԵՎԱԿԵՐՊՎՈՂ ԱՊՐԱՆՔԻ ՈՉՆՉԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅԱՆ, ՎԱՅՐԻ ԵՎ ԵՂԱՆԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են «Ոչնչացում» մաքսային ընթացակարգով ձևակերպվող ապրանքի ոչնչացման եզրակացության տրամադրման հետ կապված հարաբերությունները:

2. Եզրակացություն ստանալու համար հայտարարատուն լիազոր մարմին է ներկայացնում դիմում՝ համաձայն ձևի:

3. Լիազոր մարմինը, հայտատուի ներկայացրած փաստաթղթերի հիման վրա, 10 աշխատանքային օրվա ընթացքում տալիս է եզրակացություն՝ համաձայն սույն որոշման N 3 հավելվածի:

4. Եզրակացություն ստանալու մասին դիմումը լիազոր մարմնի կողմից մերժվում է, եթե դիմումը և կից ներկայացվող փաստաթղթերը թերի են, որի վերաբերյալ լիազոր մարմինը դիմումն ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնում է հայտատուին, իսկ հայտատուն տեղեկացվելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում չի վերացնում դիմումում կամ կից փաստաթղթերում առկա թերությունները:

5. Եզրակացություն ստանալու համար ներկայացված դիմումի մերժման կամ բացասական եզրակացության մասին որոշում ընդունելուց հետո լիազոր մարմինը 2 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր (էլեկտրոնային եղանակով, փոստով կամ առձեռն) տեղեկացնում է հայտատուին՝ նշելով մերժման հիմքերը:

6. Եզրակացությունը կորցնելու (ոչնչացվելու և այլն) դեպքում լիազոր մարմնի կողմից կտրամադրվի եզրակացության կրկնօրինակը, որի աջ անկյունում կատարվում է դրոշմակնքում՝ «Կրկնօրինակ» բառով:

Ձև

Դ Ի Մ ՈՒ Մ

«ՈՉՆՉԱՑՈՒՄ» ՄԱՔՍԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ՁԵՎԱԿԵՐՊՎՈՂ ԱՊՐԱՆՔԻ ՈՉՆՉԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅԱՆ, ՎԱՅՐԻ ԵՎ ԵՂԱՆԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիմող _____

(իրավաբանական անձի անվանումը, անհատ ձեռնարկատիրոջ, ֆիզիկական անձի անունը, ազգանունը,

_____

հեռախոսահամարը և էլեկտրոնային հասցեն)

Գտնվելու վայրը՝ _____

(իրավաբանական անձի գտնվելու վայրը, անհատ ձեռնարկատիրոջ, ֆիզիկական անձի բնակության վայրը)

Իրավաբանական անձի պետական գրանցման համարը, անհատ ձեռնարկատիրոջ պետական հաշվառման համարը _____

Ֆիզիկական անձի անձնագրային տվյալները _____

Խնդրում եմ տալ եզրակացություն «Ոչնչացում» մաքսային ընթացակարգով ձևակերպվող _____ապրանքի _____ եղանակով

(ապրանքի անվանումը, քանակը)

_____ վայրում ոչնչացման վերաբերյալ:

Դիմումին կից ներկայացնում եմ

_____:

Հայտնում եմ, որ ներկայացված փաստաթղթերում առկա տվյալներն ամբողջական են և հավաստի:

Դիմող _____ _____

(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

____ _____ 20 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

14.10.2021
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ